

# ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

## Ռ Ռ Ի Ս Ա Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Սինոդը անընդունելի դատւ ժամանակաւոր կառավարութեան որոշումը, որ եկեղեցական դպրոցները յանձնուեն լուսաւորութեան նախարարութեանը, որովհետեւ այդպիսով եկեղեցին կզրկուի իւր կրօնական-լուսաւորչական ազդեցութիւնները տարածող մի էական միջոցից.

Յունիսի 30-ին Սինոդը ճանաչեց Վրաց եկեղեցու աւտօկէֆալ լինելը և աւագ դատախազին յանձնարարեց նախադիժ պատրաստել, որոշելու ուս և վրաց եկեղեցու սահմանները կովկասում: Վրաստանի էկզարխը պէտք է կոչուի կովկասի էկզարխ:

Եկեղեցական համագումարի նախապատրաստութիւն տեսնող յանձնաժողովը քննելով եկեղեցու և պետութեան խնդիրը որոշեց եկեղեցու կատարեալ անկախութեանը ձգտել, բայց ոչ այն մտքով, որ եկեղեցին պետութիւնից բաժանուի: Մանրամասնութիւնները մշակելու համար ընտրուել է յանձնաժողով, որի անդամներն են նաև ուսուցչապետներ՝ Շէյխն, Բենեշիվիչ և Միշչենկօ:

Սինոդը հաստատել է Մոսկուայի մետրապօլիտութեան աթոռի համար վերջերս ընտրուած Տիխօն արքեպիսկոպոսին. բայց մետրօպօլիտութեան աստիճանի բարձրացնել հնարաւոր չգտաւ առանց եկեղեցական ժողովի:

Այժմ ողջ Ռուսաստանում մի կառավարիչ մետրօպօլիտ կայ— դա Կիևի Վլադիմիր մետրօպօլիտն է:

Սինոդը գրադուած է ամուսնալուծութեան խնդրի քննութեամբ. Սինոդին ներկայացուած է ամուսնալուծութեան իրաւունք տուող 32 առիթ. առաջ գոյութիւն ունէր 5 առիթ միայն: Սինոդը սկզբունքով դէմ չէ ներկայացրած նախադիժն նկատելով նրա մէջ

կեանքի հասունացած պահանջներ. բայց նախագծում կան կանոնական իրաւունքին դէմ եղող կէտեր: Հարցի վերջնական լուծումը թողնուած է յունիսի վերջի նիստին:

Սինոդը որոշել է օգոստոսի 15-ին Մոսկուայում համառուսական ուղղափառ եկեղեցու ժողով գումարել. հաստատուած է ժողովի գումարման հրահանգը և յայտարարուած վերոյիշեալների մասին ժամանակաւոր կառավարութեան պաշտօնական թերթում:

Օդեսայում գումարուած թեմական համագումարը թոյլատրելի համարեց Աւետարանի ընթերցումը ուկրայինեան լեզուով:

Սինոդը առանձին գրութեամբ դիմել է Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին հայրենիքի ճգնաժամի օրերին կատարել սրբութեամբ իրենց պարտքը և իրենց զղջումով Աստուծոյ բարկութիւնը մեղմացնել:

Պետրոգրադում գումարուելիք կրօնաւսոյցների կազմակերպիչ յանձնաժողովը պատգամաւորների համար նախօրօք ապրուստի և բնակարանի պատրաստութիւններ է տեսել:

Յուլիսի 13-ին քննութեան առնուեց եկեղեցական ժողովի նախագիծը, որ վերաբերում է եկեղեցու և պետութեան յարաբերութեան խնդրին: Ըստ նախագծի եկեղեցին իւր նախկին արտօնեալ վիճակից հրաժարուելու է, բայց պէտք է մնայ պետութեան կրօնների մէջ առաջինը և պէտք է օգտուի պետութեան հովանաւորութիւնից: Պետութեան գլուխը և դաւանանքների նախարարը պէտք է ուղղափառ լինին: Պետութիւնը պէտք է եկեղեցու որոշումներին օրինական ոյժ տայ. պետութիւնը պէտք է եկեղեցուն նիւթապէս աջակցէ:

